ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

10.03.2014թ. ժ.11:00

**Մասնակցում էին՝**
Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Ա.Սաֆյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

**Հրավիրված էին՝** Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ն.Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Վ. Արևշատյան (բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ), Վ. Գևորգյան (գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության պետ):

**Օրակարգի նախագծում հինգ հարց.**

1. «2013թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/*
2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2012 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*
3. «Անհատական սպառում՝ ըստ նպատակների Հայաստանի Հանրապետության դասակարգիչը (հինգ նիշ մակարդակով) հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Վ. Արևշատյան/*
4. «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղական համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 2-ԳՀՀ» հարցաթերթը հաստատելու մասին հարցը:
*/Զեկուցող՝ Վ. Գևորգյան/*
5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
/Քվեարկության արդյունքները-կողմ՝6, դեմ՝0, ձեռնպահ՝0/

**Լսեցին՝**
1. «2013թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

**Որոշեցին՝**
հաստատել <<2013 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը>>՝ համաձայն հավելվածի:
*/Միաձայն/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝6, դեմ՝0, ձեռնպահ՝0/*

**Լսեցին՝**
2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2012 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**
թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004-2012 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

3. «Անհատական սպառում՝ ըստ նպատակների Հայաստանի Հանրապետության դասակարգիչը (հինգ նիշ մակարդակով) հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Վ. Արևշատյան/*

**Որոշեցին՝**

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքներում կիրառելու նպատակով հաստատել «Անհատական սպառում՝ ըստ նպատակների Հայաստանի Հանրապետության դասակարգիչը (հինգ նիշ մակարդակով)» համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

4. «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղական համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 2-ԳՀՀ» հարցաթերթը հաստատելու մասին հարցը:

*/Զեկուցող՝ Վ. Գևորգյան/*

**Որոշեցին՝**

հաստատել՝ «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղական համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 2-ԳՀՀ» հարցաթերթը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ